ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

,,13,, սեպտեմբերի 2013թ. N 113

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐԹՈՒՐ ՍՈՒՐԵՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 226-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392 -Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության» 68-րդ կետի 15-րդ ենթակետի պահանջը անպատշաճ կատարելու համար «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արթուր Սուրենի Վարդանյանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «Խիստ նկատողություն»:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ